<p><b>8. Դասընթացի նպատակն է՝</b> ուսանողներին ներկայացնել լեզվաբանական ուղղությունները, ուսումնասիրման մեթոդները, հոգելեզվաբանական յուրահատկությունները, աշխարհի լեզուների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի ընդհանուր առանձնահատկություններն ու բնութագրերը, աշխարհի լեզուներն ու նրանց բաշխումը լեզվաընտանիքներում:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>➢ Դիտարկել լեզվի բնութագրերն ու բնորոշումները:</li> <li>➢ Ներկայացնել ընդհանուր լեզվաբանության ճյուղերն ու բաժինները:</li> <li>➢ Համեմատել լեզվաբանական հին և ժամանակակից հոսանքներն ու դպրոցները:</li> <li>➢ Ծանոթացնել լեզուների կառուցվածքային առանձնահատկություններին ու մակարդակներին:</li> <li>➢ Ներկայացնել աշխարհի լեզուները, մարդկային լեզվի դերն ու նշանակությունը, լեզվամտածողական մեխանիզմը և դրա ընդհանուր դիմագիծը:</li> </ul>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Բնութագրելու «Ընդհանուր լեզվաբանության» առարկայի և գիտության առանձնահատկությունները,</li> <li>2. Ներկայացնելու լեզուների կառուցվածքային օրինաչափությունները, ծագումնաբանական և տիպաբանական առանձնահատկությունները,</li> <li>3. Տարբերելու լեզվամտածողական որոշակի գործընթացներն ու դրանց մեխանիզմները լեզվական, խոսքակազմական, հաղորդակցական գործընթացներում,</li> <li>4. Ուրվագծելու մարդկային հոդաբաշխ լեզվի այս կամ այն հատկությունը, քերականական կարգերի արտահայտությունը բուն լեզվակիրառական գործընթացում և տեսական մակարդակում:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Տարբերակելու լեզվի կառուցվածքային միավորների բնութագրերն ու բնորոշումները:</li> <li>2. Չուգադրելու և համեմատելու լեզուների քերականական իմաստների արտահայտման ընդհանրություններն ու տարբերությունները թեքական, կցական և անջատական լեզուներում:</li> <li>3. Ներկայացնելու լեզվական կարգերը, աշխարհի լեզուների դասակարգման չափանիշներն ու</li> </ol>		

<p>սկզբունքները:</p> <p>4. Հետազոտելու և մատնացույց անելու ցեղակից լեզուների ընտանիքների միջև աշխարհայացքային և մտածական հիմքերի առաջնահերթությունը:</p> <p><b>գ. քննական/փոխանցելի կարողություններ</b></p> <p>1. Օգտվելու դասընթացին վերաբերող տպագիր և համացանցային ռեսուրսներից:</p> <p>2. Լեզվաբանական հետազոտության մեթոդների ու եղանակների գործադրումով կատարելու հետազոտական աշխատանքներ (գեկուցում, ավարտական աշխատանք):</p> <p>3. Ունեցած գիտելիքների հիման վրա պլանավորելու, մշակելու, հետազոտելու և ի վերջո համապատասխան եզրակացության գալով՝ գնահատելու լեզվական զանազան խնդիրներ:</p>
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.</p> <p><b>Ա1.</b> Բացահայտելու լեզվաբանական բնագավառի արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:</p> <p><b>Ա2.</b> Ճանաչելու լեզվաբանական արդի մեթոդաբանական ուղղությունները, լեզվաբանական հիմնախնդիրներն ու առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները:</p> <p><b>Ա3.</b> Դրստորելու ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար և ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու մասնագիտական-հետազոտական գործունեություն:</p> <p><b>Ա4.</b> Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:</p> <p><b>Բ1.</b> Կիրառելու լեզվական և գրականագիտական, ըստ անհրաժեշտության՝ գիտական հարակից այլ բնագավառների փաստերի հավաքման, պահպանման, համադրման և մշակման մեթոդները:</p> <p><b>Բ2.</b> Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:</p> <p><b>Բ3.</b> Գործառելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական ուսումնասիրություններ կատարելիս:</p> <p><b>Բ6.</b> Օգտագործելու բնագրային նյութերը լեզվաբանական, բարբառագիտական և գրականագիտական ուսումնասիրություններում:</p> <p><b>Գ1.</b> Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական-հետազոտական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից հայթայթելու մասնագիտական արդիական տեղեկատվություն և կիրառելու դրանք հետազոտությունների արդյունքներում:</p> <p><b>Գ3.</b> Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <p>1. դասախոսություն,</p> <p>2. անհատական և խմբային աշխատանք, անհատական և թիմային հետազոտական աշխատանք,</p> <p>4. ինքնուրույն աշխատանք, բանավոր ներկայացում/պրեզենտացիա (անհատական ինքնուրույն նախագծի իրականացում), գրավոր և բանավոր ստուգում/հարցում/,</p> <p>5. գնական մեթոդներից՝ դիդակտիկ նյութերի ցուցադրում, ինտերակտիվ-կառուցողական մեթոդներից՝ աշխատանք բնագրի ու տեքստերի հետ:</p>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Դասընթացն ավարտվում է եզրափակիչ գնահատմամբ և ներառում է երկու ընթացիկ քննություն.</p> <p><b>1-ին ընթացիկ քննություն</b>՝ գրավոր, 5 միավոր առավելագույն արժեքով,</p> <p><b>2-րդ ընթացիկ քննության 5 միավորը</b> ձևավորվում է կիսամյակի ընթացքում ուսանողի կատարած հետազոտական աշխատանքի իրականացման մակարդակին համապատասխան:</p> <p><b>Եզրափակիչ բանավոր քննություն</b> անց է կացվում հարցատոմսերով՝ 10 միավոր առավելագույն արժեքով (հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 4+ 3+3 միավորով):</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Լեզուների ուսումնասիրման մեթոդները: <b>Թեմա 2.</b> Լեզվաբանական ուղղությունները: <b>Թեմա 3.</b> Լեզվաբանական դպրոցները: <b>Թեմա 4.</b> Ընդհանուր և մասնավոր լեզվաբանություն: <b>Թեմա 5.</b> Պատմա-համեմատական լեզվաբանություն: <b>Թեմա 6.</b> Տիպաբանական լեզվաբանություն: <b>Թեմա 7.</b> Կառուցվածքային լեզվաբանություն: <b>Թեմա 8.</b> Ճանաչողական լեզվաբանություն:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <p>1. Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987:</p> <p>2. Глухов В., Онтогенез речевой деятельности, Москва, 2018:</p>

3. Есперсен О., Философия грамматики, Москва, 1958:
4. Звегинцев В., Язык и лингвистическая теория. Москва, 2001:
5. Леонтьев А., Прикладная психолингвистика речевого общения и массовой коммуникации, Москва, 2012:
6. Мусорин А., Основы науки о языке, Новосибирск, 2004:

1.0302/ B37	2.Գրականության տեսություն	3.5 ECTS կրեդիտ
4.5 ժամ/շաբ.	5.15/0/5	
6.6-րդ կիսամյակ	7.Եզրափակիչ գնահատմամբ	
<p><b>8.Դասընթացի նպատակն է</b> լուսաբանել գրականության ընդհանուր տեսական հարցերը, բացահայտել կյանքի և գրականության հարաբերակցությունը:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>➤ Ուսանողների մեջ ձևավորել գրականագիտական ու գեղագիտական հիմնախնդիրների, գրական ուղղությունների, հոսանքների, սեռերի ու ժանրերի, գրականության վերլուծության մեթոդների վերաբերյալ իմացություն:</li> <li>➤ Ուսանողների մեջ ձևավորել և զարգացնել գրականության զարգացման ընթացքի մեջ գրական երկերը գնահատելու, նրանց կառուցվածքային տարրերը, գեղարվեստական արժանիքները վերհանելու հմտություններ:</li> <li>➤ Ուսանողներին հաղորդակից դարձնել խոսքարվեստի նմուշներին:</li> </ul>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Բնութագրելու գրականության գեղագիտական բնույթը:</li> <li>2. Սահմանելու գրողի ստեղծագործական նպատակը պայմանավորող գեղագիտական իդեալը:</li> <li>3. Սահմանելու գրականության ընդհանուր և մասնավոր ըմբռնումները:</li> <li>4. Ցուցադրելու գրականության և արվեստի տեսակների, գրականության և ժողովրդական բանահյուսության կապը:</li> <li>5. Նկարագրելու գրականության ազգային և համամարդկային բնույթը:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կատարելու գրականագիտական վերլուծություններ:</li> <li>2. Ներկայացնելու գրական-գեղարվեստական ուղղությունների առաջացման պատմական պայմանները ու նրանց հիմնական առանձնահատկությունները:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Վերլուծելու անտիկ աշխարհի, միջնադարի և վերածննդի գեղագիտական-գրականագիտական միտքը:</li> <li>2. Տարբերակելու գեղագիտական հիմնական կատեգորիաները՝ գեղեցիկը, վեհը, ողբերգականը և կոմիկականը:</li> <li>3. Ներկայացնելու և կիրառելու գրական սեռերի ու ժանրերի առանձնահատկությունները:</li> </ol>		
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.</p> <p><b>Ա1.</b> Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական (մասնագիտական) բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, սլվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:</p> <p><b>Ա2.</b> Ճանաչելու լեզվաբանական և գրականագիտական մեթոդաբանական ուղղությունները:</p> <p><b>Ա3.</b> Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններ ծավալելիս, գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս, անհատական կամ խմբային հետազոտություններ կատարելիս:</p> <p><b>Ա5.</b> Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած ուսումնասիրության արդյունքները:</p> <p><b>Բ1.</b> Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:</p> <p><b>Բ3.</b> Գործառնելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:</p> <p><b>Բ5.</b> Դրսևորելու ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար, ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու մասնագիտական-հետազոտական գործունեություն:</p> <p><b>Գ1.</b> Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական-հետազոտական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից հայթայթելու մասնագիտական արդիական տեղեկատվություն և կիրառելու դրանք հետազոտությունների արդյունքներում:</p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և</p>		

<p>գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ3.</b> Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:</p> <p><b>Գ6.</b> Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. խոսքային մեթոդները (դասախոսությունը, բացատրումը, պատմումը, ընթերցումը, գրույցը, երկխոսությունը և այլն),</li> <li>2. զննական մեթոդները (դիդակտիկ նյութերի ցուցադրումը, դիտումը և այլն),</li> <li>3. տրամաբանական մեթոդները (ինդուկտիվ (մակաձուլ), դեդուկտիվ (արտաձուլ), անալոգիա և այլն),</li> <li>4. ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական-ցուցադրական, պրոբլեմային-որոնողական),</li> <li>5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները (բանավեճ, դերային խաղ, աշխատանք բնագրի հետ և այլն),</li> <li>6. քննադատական մտածողության մեթոդները,</li> <li>7. ինքնուրույն աշխատանքի մեթոդները:</li> </ol>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն</b> (գրավոր, 5 /4+1/միավոր առավելագույն արժեքով):</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն</b> (գրավոր, 5 /4+1/միավոր առավելագույն արժեքով):</p> <p><b>Եզրափակիչ քննություն</b> (բանավոր, 10/8+2 / միավոր առավելագույն արժեքով):</p> <p>Նախատեսված <b>2 ընթացիկ քննությունները</b> գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Յուրաքանչյուր ընթացիկ քննության հարցատոմսը պարունակում է 4 հարց (յուրաքանչյուրը՝ 1 միավոր) և սեմինարին ակտիվությունը (1 միավոր):</p> <p><b>Եզրափակիչ քննությունը</b> բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Եզրափակիչ քննության հարցատոմսը պարունակում է 4 հարց (յուրաքանչյուրը՝ 2 միավոր) և ինքնուրույն աշխատանքը (2 միավոր):</p> <p>Առավելագույն <b>20</b> միավորը ձևավորվում է այսպես.</p> <p><b>20 = 5 (4 /I ընթ. քնն./ + 1 /սեմ./) + 5 (4 /II ընթ. քնն./ + 1 /սեմ./) + 10 (8 /եզր. քնն./ + 2 /ինքն./):</b></p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1. Գրականագիտություն և գեղագիտություն:</b> Գրականության գեղագիտական բնույթը: <b>Թեմա 2. Գեղագիտական միտքը անտիկ շրջանում, միջնադարում և վերածննդի շրջանում:</b> <b>Թեմա 3.</b> Գեղագիտական կատեգորիաներ. գեղեցիկը, վեհը, ողբերգականը, կոմիկականը: <b>Թեմա 4. Գրականությունը որպես արվեստի տեսակ. սեռեր և ժանրեր.</b> գրականության ընդհանուր և մասնավոր ըմբռումները: Գրականությունը և արվեստի տեսակները: Գրականությունը և ժողովրդական բանահյուսությունը: Գրականության ազգային և համամարդկային բնույթը: Գրական սեռեր: Գրական երկերի բազմազանության պատճառները: Էպիկական սեռ, քնարական սեռ, դրամատիկական սեռ: Գրական սեռերի փոխներթափանցումը: Գրական տեսակներ (ժանրեր): Գրական ժանրերի զարգացումը: Ժանրային համակարգի ըմբռումը: Էպիկական ժանրեր. դիցաբանական գրույց, առասպել, լեգենդ, ավանդություն: Էպիկական ժանրեր. հեքիաթ, ժողովրդական էպոս: Էպիկական ժանրեր. վեպ, վիպակ: Էպիկական ժանրեր. պատմվածք, նովել, ակնարկ: Քնարական ժանրեր. ներբող, եղերերգություն, հովվերգություն, էպիգրամ, էպիտաֆիա, ուղերձ, պարողիա: Քնարերգության թեմատիկ բաժանումը: Քնարաէպիկական ժանրեր. առակ, բալլադ, պոեմ: Դրամատիկական ժանրեր. ողբերգություն, կատակերգություն, դրամա: <b>Թեմա 5. Գրական-գեղարվեստական ուղղություններ.</b> կլասիցիզմ, կլասիցիզմի առաջացման պատմական պայմանները, կլասիցիզմի հիմնական գծերը: Ռոմանտիզմ: Սենտիմենտալիզմ (նախառոմանտիզմ): Ռոմանտիզմի պատմական ճակատագիրը: Կյանքի ռոմանտիկական արտացոլման առանձնահատկությունները: Ռեալիզմը Վերածնության դարաշրջանում, Լուսավորության շրջանում և 19-րդ դարում: Կյանքի ռեալիստական արտացոլման հիմնական գծերը: 19-20-րդ դարերի այլ գրական հոսանքներ. նատուրալիզմ, ֆուտուրիզմ, մոդեռն հոսանքներ՝ ակմեիզմ, իմպրեսիոնիզմ, էքսպրեսիոնիզմ, սյուրռեալիզմ, էքզիստենցիալիզմ: Միմվոլիզմը իբրև արևմտաեվրոպական գրական ուղղություն: Միմվոլիզմի դրսևորումները հայ գրականության մեջ:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ավետիսյան Զ., Գրականության տեսություն, Երևան, 1998:</li> <li>2. Բոբև Յու., Գեղագիտություն, Երևան, 1982:</li> <li>3. Գրական ժանրեր. պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը, Երևան, 1973:</li> <li>4. Գրական ստեղծագործություն: Վերլուծության ուղիները և սկզբունքները, Երևան, 1983:</li> <li>5. Ջրբաշյան Էդ., Գրականագիտության ներածություն, Երևան, 2011:</li> <li>6. Ջրբաշյան Էդ., Գեղագիտություն և գրականություն, Երևան, 1983:</li> <li>7. Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, 1972:</li> <li>8. Ուելլեք Ռ., Ուորրեն Օ., Գրականության տեսություն, Երևան, 2008:</li> </ol>

1.302/ B38	2.Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն-1	3.5 ECTS կրեդիտ
------------	--	-----------------

4.5 ժամ/շաբ.	5.10/10/0
6.5-րդ կիսամյակ	7.Եզրափակիչ գնահատմամբ
<p><b>8.Դասընթացի նպատակն է՝</b> ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգը իր հատկանիշներով, շարահյուսական կապակցման միջոցներն ու եղանակները, նախադասության դասակարգման հիմունքները, պարզ նախադասության կառուցվածքը:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>➤ խոսք կառուցելու ժամանակ անսխալ կիրառել շարահյուսության քերականական կատեգորիաներ՝ նախադասության անդամների շարադասությունը, կապակցման միջոցներն ու եղանակները՝ համաձայնությունն ու խնդրառությունը, նախադասության կառուցվածքային տեսակները, հոլովների շարահյուսական կիրառությունները:</li> </ul>	
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և խնացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Վերարտադրելու շարահյուսության քերականական կարգերն ու նրանց առանձնահատկությունները:</li> <li>2. Չանագանելու բառի, բառակապակցության ու նախադասության տարբերությունները՝ իրենց հատկանիշներով:</li> <li>3. Ըմբռնելու նախադասության գլխավոր և երկրորդական անդամների հատկանիշները, արտահայտությունը, շարադասությունը, կապակցման եղանակներն ու միջոցները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կատարելու նախադասության շարահյուսական անթերի վերլուծություն:</li> <li>2. Հստակորեն տարբերակելու հոլովների շարահյուսական կիրառությունները:</li> <li>3. Գրավոր և բանավոր խոսքում գործածելու գրական հայերենի լեզվական նորմերով կառուցված նախադասություններ:</li> </ol>	
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.</p> <p><b>Ա1.</b> Բացահայտելու լեզվաբանական բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:</p> <p><b>Ա3.</b> Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններ ծավալելիս, գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս, անհատական կամ խմբային հետազոտություններ կատարելիս:</p> <p><b>Ա4.</b> Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:</p> <p><b>Բ1.</b> Կիրառելու լեզվական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:</p> <p><b>Բ2.</b> Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:</p> <p><b>Բ3.</b> Գործառելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:</p> <p><b>Բ5.</b> Դրսևորելու ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար, ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու մասնագիտական-հետազոտական գործունեություն:</p> <p><b>Գ1.</b> Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական-հետազոտական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից հայթայթելու մասնագիտական արդիական տեղեկատվություն և կիրառելու դրանք հետազոտությունների արդյունքներում:</p> <p><b>Գ4.</b> Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը:</p> <p><b>Գ6.</b> Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:</p>	
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. դասախոսություն,</li> <li>2. համագործակցային աշխատանք,</li> <li>3. ինքնուրույն առաջադրանքներ/ ռեֆերատ, աշխատանք գական երկերի վրա, էսսե, շարադրություն և այլն/,</li> <li>4. սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում,</li> <li>5. մտազբոս և այլն:</li> </ol>	
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն:</b> Թեստային աշխատանք: Առավելագույնը՝ 5 միավոր:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն:</b> Բանավոր քննություն: Առավելագույնը՝ 5 միավոր:</p> <p><b>Եզրափակիչ գնահատման</b> 10 միավորը տրոհվում է 8+2 սկզբունքով, որտեղ առավելագույն 8 միավորն</p>	

<p>ուսանողը վաստակում է բանավոր քննությունից, իսկ առավելագույն 2 միավորը՝ կիսամյակի ընթացքում կատարած ինքնուրույն աշխատանքի մակարդակին համապատասխան (անհատական թեմատիկ առաջադրանքներ և շարադրանքներ, օժանդակ գրականությունից մշակումներ, նախադասությունների վերլուծություններ, ռեֆերատ):</p> <p>Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Շարահյուսական կապակցման միջոցներ ու եղանակներ: <b>Թեմա 2.</b> Բառակապակցություն, տեսակները: <b>Թեմա 3.</b> Պարզ նախադասության կառուցվածքը: <b>Թեմա 4.</b> Միակազմ նախադասություններ: <b>Թեմա 5.</b> Նախադասության գլխավոր անդամներ: <b>Թեմա 6.</b> Նախադասության երկրորդական անդամներ: <b>Թեմա 7.</b> Հոլովների շարահյուսական կիրառությունները:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ասատրյան Մ. Ժամանակակից հայոց լեզու /շարահյուսություն/, Երևան, 1987:</li> <li>2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:</li> <li>3. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2002:</li> <li>4. Գարեգինյան Գ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1991:</li> <li>5. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ, Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան, 1976:</li> <li>6. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 2009:</li> </ol>

1.0302/B39	2.19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության պատմություն-1	3.7 ECTS կրեդիտ
4.9 ժամ/շաբ.	5.26/ 0/ 10	
6.6-րդ կիսամյակ	7.Եզրափակիչ գնահատմամբ	
<p><b>8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել XIX դարի 90-ական թվականների և XX դարի սկզբների հայ գրականությունը, գրական ուղղությունները:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրներն են</b></p> <ul style="list-style-type: none"> <li>➤ Գնահատել XIX դարի 90-ական թվականների և XX դարի սկզբների հայ գրականությունը՝ այն դիտարկելով որպես մեր բազմադարյան գրականության պատմության երկար ու միասնական շղթայի մի կարևոր փուլը:</li> <li>➤ Առանձնացնել գրական այն նվաճումները, գործերն ու արժեքները, որոնք էական նշանակություն են ունեցել ոչ միայն իրենց ժամանակին, այլև դրանցի հետո ևս:</li> <li>➤ Ժամանակաշրջանի գրական գործերին մոտենալ ոչ թե մեր օրերի գեղագիտական ըմբռումների մակարդակով, այլ այն ժամանակների, որոնց մեջ ստեղծվել է տվյալ գործը:</li> <li>➤ Պարզաբանել այն պատմական հանգամանքները կամ հեղինակային նպատակները, որոնք ներքին մղում են տվել տվյալ գրողին ու պատճառ դարձել նրա երևան գալուն:</li> </ul>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի.</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և խմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Մահմանելու և նկարագրելու գրական ուղղություններն ու ժանրերը:</li> <li>2. Արժևորելու գրական ստեղծագործությունների գեղարվեստական նշանակությունը, գաղափարական առանձնահատկությունները, պատմական-հասարակական դերը:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Գնահատելու XIX դարի 90-ական թվականների և XX դարի սկզբների հայ գրականությունը՝ այն դիտարկելով որպես մեր ժողովրդի գեղարվեստական հոգևոր մշակույթի հարուստ բնագավառ:</li> <li>2. Արժևորելու գրական ստեղծագործությունների գեղարվեստական, պատմական-հասարակական դերը:</li> </ol> <p><b>գ. քննադատական (փոխանցելի) կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Մատուցելու, վերլուծելու և գնահատելու հայ նոր գրականության հարուստ նյութը:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</b></p> <p>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.</p> <p><b>Ա1.</b> Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառի արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:</p> <p><b>Ա3.</b> Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններ ծավալելիս, գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս, անհատական կամ խմբային հետազոտություններ կատարելիս:</p> <p><b>Ա4.</b> Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:</p> <p><b>Ա5.</b> Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած ուսումնասիրության</p>		

<p>արդյունքները:</p> <p><b>Բ1.</b> Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:</p> <p><b>Բ2.</b> Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:</p> <p><b>Բ3.</b> Գործառելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:</p> <p><b>Բ4.</b> Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի և գրականության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր:</p> <p><b>Բ6.</b> Օգտագործելու բնագրային նյութերը լեզվաոճական, բարբառագիտական և գրականագիտական ուսումնասիրություններում:</p> <p><b>Գ1.</b> Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական-հետազոտական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից հայթայթելու մասնագիտական արդիական տեղեկատվություն և կիրառելու դրանք հետազոտությունների արդյունքներում:</p> <p><b>Գ3.</b> Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:</p> <p><b>Գ4.</b> Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը:</p> <p><b>Գ6.</b> Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. քննարկում /բանավեճ</li> <li>2. համագործակցային աշխատանք</li> <li>3. մտազրոհ</li> <li>4. վերլուծական մեթոդ</li> <li>5. խոսքային կամ բանավոր մեթոդ</li> <li>6. գրավոր մեթոդ</li> <li>7. բացատրական մեթոդ</li> <li>8. էլեկտրոնային ուսուցում:</li> </ol>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Գնահատման ընդհանուր ռազմավարությունը.</b> ընթացիկ 2 քննություն՝ գրավոր տարբերակով, յուրաքանչյուրը՝ առավելագույնը 5 միավոր, եզրափակիչ քննություն՝ առավելագույնը 10 միավոր:</p> <p><b>Ընթացիկ քննությունների 5 միավորը տրոհվում է</b> 4+1 սկզբունքով, որտեղ առավելագույն 4 միավորը ուսանողը վաստակում է ընթացիկ քննությունից (գրավոր տարբերակ) և առավելագույն 1 միավորը՝ սեմինար դասընթացներից՝ ըստ ընթացիկ քննաշրջանում ուսանողի վաստակած միջին գնահատականի (5-ի դեպքում 1, 4-ի դեպքում 0,75, 3-ի դեպքում՝ 0,5, 2-ի դեպքում՝ 0):</p> <p><b>Եզրափակիչ գնահատման 10 միավորը</b> տրոհվում է 8+1+1 սկզբունքով, որտեղ առավելագույն 8 միավորը ուսանողը վաստակում է բանավոր անցկացվող քննությունից, առավելագույն 1 միավորը՝ կիսամյակի ընթացքում ուսանողի կատարած ինքնուրույն աշխատանքի իրականացման մակարդակին համապատասխան (օրինակ՝ 1 միավորը կարող է ձևավորվել հետևյալ բաղադրիչներով.</p> <ul style="list-style-type: none"> <li>• անհատական թեմատիկ առաջադրանք,</li> <li>• տարբեր աղբյուրներից թեմայի շրջանակներում տեղեկատվության հայթայթում և համակարգում,</li> <li>• տրված առաջադրանքի սահմաններում թեմատիկ վերլուծություն):</li> </ul> <p>Առավելագույն 1 միավորը՝ ռեֆերատի ներկայացում:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Հայ հասարակական-քաղաքական կյանքը 19-րդ դարի 90-ական թթ. քննադատական ռեալիզմի զարգացումը: <b>Թեմա 2.</b> Շիրվանզադե, Մուրացան: <b>Թեմա 3.</b> Նար-Դոս, Ն.Հովհաննիսյան: <b>Թեմա 4.</b> Ալ.Օստրոյան. 1890-ական թթ. գյուղագրությունը: <b>Թեմա 5.</b> Վրթանես Փափազյան: <b>Թեմա 6.</b> Ա.Արփիարյան, Տ.Կամսարական, Գ. Զոհրապ:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկը.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հայ վեպի պատմությունը (19-րդ դար), Երևան, 2005:</li> <li>2. Հայ նոր գրականության պատմություն, հատոր 4, Եր., 1972, հատոր 5, Երևան, 1979:</li> <li>3. Թամրազյան Հր., Շիրվանզադե, Երևան, 1978:</li> <li>4. Մարինյան Ս., Մուրացան, Երևան, 1976:</li> <li>5. Հովսեփյան Գ., Նար-Դոս, Երևան, 1961:</li> <li>6. Օհանյան Ա., Վրթանես Փափազյան, Երևան, 1976:</li> </ol>

7. Հակոբյան Ս., Արփիար Արփիարյան, Վիեննա, 1922:
8. Մկրտիչ Մկրյան, Հովհ. Թումանյանի ստեղծագործությունը, Երևան, 1981:

1. 0302/B40	2.19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմություն	3. 4 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/շաբ.	5.15/0/5	
6. 6-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատմամբ	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b> ուսանողներին ընդհանուր գիտելիքներ հաղորդել Լուսավորության դարաշրջանի գրականության պատմության, գրական խոշորագույն երևույթների և գրական զարգացման ընդհանուր ընթացքի վերաբերյալ:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <p>➤ Ներկայացնել Լուսավորության դարաշրջանը որպես նոր հայացքների և նոր մտածողության ժամանակաշրջան, դարաշրջանի գրողների հայացքները և ստեղծագործությունները:</p>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <p>1. Ընկալելու Լուսավորության դարաշրջանի գրական միտքը, հումանիստական մտածողությունը և գրական բարձրաժեք ստեղծագործությունները:</p> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <p>1. Թվարկելու և մեկնաբանելու գրական ստեղծագործությունների կերպարային համակարգը:</p> <p>2. Վերլուծելու ժամանակի գրական ստեղծագործությունների գաղափարական հարցադրումները:</p> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <p>1. Կատարելու համեմատական վերլուծություն հայ և Վերածննդի գրականության ստեղծագործությունների միջև:</p> <p>2. Օգտվելու տեսական նյութից և կատարելու ադապտացիաներ:</p>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.</p> <p><b>Ա1.</b> Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական (մասնագիտական) բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:</p> <p><b>Ա3.</b> Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններ ծավալելիս, գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս, անհատական կամ խմբային հետազոտություններ կատարելիս:</p> <p><b>Ա5.</b> Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած ուսումնասիրության արդյունքները:</p> <p><b>Բ1.</b> Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:</p> <p><b>Բ3.</b> Գործառելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:</p> <p><b>Բ5.</b> Դրսևորելու ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար, ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու մասնագիտական-հետազոտական գործունեություն:</p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ3.</b> Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:</p> <p><b>Գ6.</b> Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:</p>		
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <p>Դասախոսություն, սեմինար, քննարկում, բանավեճ, համագործակցային աշխատանք, մտազրոհ, ինդուկտիվ, դեդուկտիվ, վերլուծական, խոսքային, բացատրական մեթոդներ, էլեկտրոնային ուսուցում, գրավոր աշխատանք, շարադրություն, բանավոր հարցում, զեկուցում, զրույց:</p>		
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>1-ին ընթացիկ ստուգումը</b> գրավոր է: Ընթացիկ ստուգման հարցատոմսը բաղկացած է 3 հարցից՝ համապատասխանաբար 3,3,4 միավոր: Միավորների քայքայ 0.5 է:</p> <p><b>2-րդ ընթացիկ ստուգումը</b> բանավոր է: Ընթացիկ ստուգման հարցատոմսը բաղկացած է 4 հարցից՝ համապատասխանաբար 3,3,2,2 միավոր: Միավորների քայքայ 0.5 է:</p>		
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Անցում ռոմանտիզմից դեպի ռեալիզմ: Նատուրալիզմի, սիմվոլիզմի առաջացումը: Երաժշտության և</p>		

պոեզիայի հարաբերությունների հարցը սիմվոլիզմի տեսության մեջ: **Թեմա 2.** Սյուրռեալիզմի դրսևորումը: **Թեմա 3.** Հետպատերազմյան շրջանի գրականությունը: Ֆրանսիական «արսուրդի» թատրոնը: **Թեմա 4.** Ֆրանսիական, անգլիական, ամերիկյան, իսպանական, լատինաամերիկյան գրականության զարգացման միտումները, ժանրային առանձնահատկությունները, հեղինակների նորարարությունները:

**14. Հիմնական գրականության ցանկ.**

- 20-րդ դարի արտասահմանյան գրականության պատմություն,
- Зарубежная лит-ра 20-го века, под. ред. Л.Г. Андреева.

1.0302/B41	2.Ռուս գրականության պատմություն	3.4 ECTS կրեդիտ
4.4 ժամ/շաբ.	5.10/0/6	
6.7-րդ կիսամյակ	7.Առանց եզրափակիչ գնահատմամբ	

**8. Դասընթացի նպատակն է** ուսանողներին ներկայացնել ռուս գրականության սեռային և ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

**Դասընթացի խնդիրները.**

- Ռուս գրականության զարգացման փուլերի և ռուսական ժողովրդական բանավոր ստեղծագործությունների իմացությունը:
- 18-րդ և 19-րդ դարերի ռուսական պոեզիայի ու արձակի լավագույն նմուշները ճանաչելը, ընթերցելն ու մեկնաբանելը:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

- Նկարագրելու և անվանելու ռուս գրականության զարգացման փուլերն ու ռուսական ժողովրդական բանավոր ստեղծագործությունները:
- Ներկայացնելու ռուսական գրական կյանքի այն գեղարվեստական նվաճումները, որոնք դարձել են դասական արժեքներ:
- Արժևորելու ռուս դասականների գրական կերպարների առանձնահատուկ դրսևորումները:
- Պարզաբանելու ժամանակաշրջանի և պատմական հանգամանքների դերը գրական ստեղծագործությունների ամբողջացման գործընթացում:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- Ներկայացնելու ռուս գրականության նշանավոր դեմքերին և նրանց ստեղծագործությունները:
- Վերլուծելու ռուս դասականների գրական ստեղծագործությունների գեղարվեստական շերտերը:
- Գնահատելու գրական երկերի գաղափարական բովանդակությունը:
- Վերլուծելու գրական երկերի կերպարային ու պատկերակերտման համակարգը:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

- Բանավիճելու և քննարկելու ուսումնասիրվող երկերը:
- Պարզաբանելու 18-19-րդ դարերի ռուսական արձակի ու պոեզիայի դերը գրական ստեղծագործությունների ամբողջացման գործընթացում:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

**Ա1.** Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական (մասնագիտական) բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, սվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

**Ա3.** Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններ ծավալելիս, գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս, անհատական կամ խմբային հետազոտություններ կատարելիս:

**Ա5.** Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած ուսումնասիրության արդյունքները:

**Բ1.** Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:

**Բ2.** Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, համակարգելու և ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:

**Բ3.** Գործառնելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:

**Գ1.** Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական-հետազոտական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից հայթայթելու մասնագիտական արդիական տեղեկատվություն և կիրառելու դրանք հետազոտությունների արդյունքներում:

**Գ2.** Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և

<p>գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ3.</b> Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:</p> <p><b>Գ6.</b> Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Դասախոսություն,</li> <li>2. սեմինար,</li> <li>3. քննարկում,</li> <li>4. բանավեճ,</li> <li>5. համագործակցային աշխատանք,</li> <li>6. մտազրոհ,</li> <li>7. ինդուկտիվ, դեդուկտիվ, վերլուծական, խոսքային, բացատրական մեթոդներ,</li> <li>8. էլեկտրոնային ուսուցում,</li> <li>9. գրավոր աշխատանք,</li> <li>10. շարադրություն,</li> <li>11. բանավոր հարցում,</li> <li>12. զեկուցում,</li> <li>13. զրույց:</li> </ol>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Գնահատման ընդհանուր ռազմավարությունը.</b> ընթացիկ 2 ստուգում՝ գրավոր տարբերակով, յուրաքանչյուրը՝ առավելագույնը 10 միավոր:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ռուս գրականության զարգացման փուլերը: <b>Թեմա 2.</b> Ռուսական ժողովրդական բանավոր ստեղծագործությունների գեղարվեստական առանձնահատկությունները: <b>Թեմա 3.</b> «Ասք Բգորի գնդի մասին» էպոսը: <b>Թեմա 4.</b> 18-րդ դարերի ռուսական արձակն ու պոեզիան: <b>Թեմա 5.</b> 19-րդ դարերի ռուսական արձակն ու պոեզիան:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Аникин В.П., Русское устное народное творчество, Москва, 2001.</li> <li>2. Лихачев Д.С., Исследования по древнерусской литературе, Ленинград, 1986.</li> <li>3. Благой Д.Д., История русской литературы XVIII в., Москва, 1960.</li> <li>4. Пospelов Г.Н., История русской литературы XIX века (1840-1860), Москва, 1981.</li> <li>5. Гаспаров М.Л., Русская поэзия серебряного века, 1890-1917 гг., Москва, 1993.</li> <li>6. Крук И.Т., Русская литература XX века. Дооктябрьский период, Ленинград, 1991.</li> <li>7. Соколов А.Г., История русской литературы конца XIX – начала XX века, Москва, 1988.</li> </ol>

<b>1.0302/B42</b>	<b>2. Արևմտահայերեն</b>	<b>3.6 ECTS կրեդիտ</b>
<b>4.6 ժամ/շաբ.</b>	<b>5.4/20 /0</b>	
<b>6.7-րդ կիսամյակ</b>	<b>7. Եզրավակիչ գնահատմամբ</b>	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b> ուսանողներին հաղորդել գիտելիքներ գրական հայերենի ճյուղերից մեկի՝ արևմտահայերենի վերաբերյալ՝ մասնավորաբար դրանք համադրելով ուսանողներին արդեն ծանոթ արևելահայերենի հնչյունաբանությունից, բառագիտությունից, ձևաբանությունից և շարահյուսությունից ձեռք բերած գիտելիքների հետ, զարգացնել ուսանողների բանավոր խոսքը՝ ընթերցած նյութը ստեղծագործաբար վերարտադրելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու և երկխոսություններ կառուցելու միջոցով:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>➤ Բացահայտել հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների, դարձվածքների գործածության յուրահատկություններն արևմտահայերենում, կանխել բառագործածական սխալները:</li> <li>➤ Մշակել արևմտահայերեն ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու և տեքստեր կազմելու կարողություններ, զարգացնել լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտություն:</li> <li>➤ Համեմատել արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունական և բառային համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները, մեկնաբանել ուղղախոսության - ուղղազրույթյան նորմերը:</li> </ul>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնելու արևմտահայերենի հիմնական առանձնահատկությունները,</li> <li>2. Տարբերակելու արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունական և բառային համակարգերի</li> </ol>		

ընդհանրություններն ու տարբերությունները և մեկնաբանելու ուղղախոսության-ուղղագրության նոր-մերը,

3. Կառուցելու արևմտահայերենի ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք և զարգացնելու լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտություն,

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. Կառուցելու հարուստ բառապաշարով, շարահյուսորեն ճշգրիտ կապակցված գրավոր և բանավոր խոսք,

2. Վերարտադրելու ընթերցած նյութը, անցկացնելու քննարկումներ և կառուցելու երկխոսություններ,

3. Մշակելու շարադրություններ, ռեֆերատներ, զեկուցումներ և կապակցված շարադրանք ստեղծելու վերլուծական-դատողական գրավոր խոսքի, կարծիքի, գրական դիմանկարի և այլ ստեղծագործական աշխատանքների միջոցով,

4. Վերլուծելու արևմտահայ հեղինակների տարաբնույթ տեքստերը:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. Համակարգելու արևմտահայերենի վերաբերող իրողությունների վերաբերյալ տվյալներ.

2. Մեկնաբանելու արևմտահայերենի հնչյունական, բառային և քերականական համակարգերին առնչվող օրինակափոխությունները:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

**Ա3.** Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններ ծավալելիս, գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս, անհատական կամ խմբային հետազոտություններ կատարելիս:

**Ա4.** Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:

**Բ2.** Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, համակարգելու և ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:

**Բ3.** Գործառելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:

**Բ4.** Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի և գրականության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր:

**Բ6.** Օգտագործելու բնագրային նյութերը լեզվաոճական, բարբառագիտական և գրականագիտական ուսումնասիրություններում:

**Գ1.** Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական-հետազոտական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից հայթայթելու մասնագիտական արդիական տեղեկատվություն և կիրառելու դրանք հետազոտությունների արդյունքներում:

**Գ4.** Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն, գործնական կամ սեմինար պարապմունքներ, քննարկումներ, հանձնարարված գրականության քննարկում, մասնակցություն արտալսարանային քննարկումների, թեզերի կատարում և ինքնուրույն հետազոտությունների հանձնարարում,

2. գրավոր կամ բանավոր հարցումներ, բանավիճային քննարկումներ, հարց ու պատասխան,

3. նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռավար ուսուցման մեթոդների կիրառում,

4. զեկույցի, էսսեի, խմբային կամ ինքնուրույն աշխատանքի, նախագծի հանձնարարում,

5. համագործակցային աշխատանքի կազմակերպում,

6. էվրիստիկական, մտազրոհ և վերլուծական մեթոդների կիրառում:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Դասընթացն ավարտվում է եզրափակիչ գնահատմամբ և ներառում է երկու ընթացիկ քննություն, որոնցից տուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր: Յուրաքանչյուր քննություն ներառում է առավելագույնը 3 հարց՝ 2+2+1 սկզբունքով, որտեղ 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից: Ստուգման ձևերն են.

1-ին ընթացիկ քննություն. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ընթացիկ քննություն. Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**Եզրափակիչ գնահատման** 10 միավորը տրոհվում է 8+2 սկզբունքով, որտեղ առավելագույն 8 միավորն ուսանողը վաստակում է բանավոր քննությունից, իսկ առավելագույն 2 միավորը՝ կիսամյակի ընթացքում կատարած ինքնուրույն աշխատանքի մակարդակին համապատասխան (անհատական թեմատիկ առաջադրանքներ և շարադրանքներ, օժանդակ գրականությունից մշակումներ, նախադասությունների

վերլուծություններ, ռեֆերատ):
<b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b> <b>Թեմա 1.</b> Հայերենի զարգացման փուլերը. Աշխարհաբարի կազմավորումը, գրապայքար. արևմտահայերենի ձևավորումը: <b>Թեմա 2.</b> Արևմտահայերենի հնչյունական համակարգը. ուղղագրություն. բաղաձայնական համակարգի արտասանական առանձնահատկությունները. հնչյունափոխություն: <b>Թեմա 3.</b> Արևմտահայերենի և արևելահայերենի բառապաշարային ընդհանրություններն ու տարբերությունները: Դարձվածային միավորներ: <b>Թեմա 4.</b> Արևմտահայերենի և արևելահայերենի ձևաբանական համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները: <b>Թեմա 5.</b> Արևմտահայերենի և արևելահայերենի շարահյուսական համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները:
<b>14. Հիմնական գրականության ցանկ.</b> 1. Սաքալետոյան Ռ. Կ., Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006: 2. Սաքալետոյան Ռ. Կ., Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևան, 2004: 3. Սաքալետոյան Ռ. Կ., Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան, Երևան, 2011: 4. Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Երևան, 2007: 5. Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն, Երևան, 2011: 6. Ավետիսյան Յու., Արևմտահայերենի քերականության գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, 2011: 7. Չոլաքեան Յ., Արևմտահայերենի քերականություն (կանոնակարգ եւ խնդիրներ), Երևան, 2017:

1.0302/B43	2.*ՀԲ* Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն-2	3.6 ECTS կրեդիտ
4.5 ժամ/շաբ.	5.10 /10 /0	
6.6-րդ կիսամյակ	7.Եզրափակիչ գնահատմամբ	
<b>8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի շարահյուսության բարդ նախադասությունը՝ իր տեսակներով, դասակարգման սկզբունքներով, բաղադրիչների կապակցության միջոցներով ու եղանակներով, քերականական դրսևորումներով:</b> <b>Դասընթացի խնդիրները</b> <ul style="list-style-type: none"> <li>➢ Բնութագրել բարդ նախադասությունը, նրա տեսակները՝ համադասական և ստորադասական:</li> <li>➢ Նրանց բաղադրիչների կապակցության շարահյուսական միջոցներն ու եղանակները:</li> <li>➢ Բազմաբարդ նախադասությունն իր տեսակներով, բարդ նախադասության փոխակերպումը պարզի և հակառակը, մեջբերվող ուղղակի խոսքը, նրա փոխակերպումը անուղղակի խոսքի:</li> </ul>		
<b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b> <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b> <ol style="list-style-type: none"> <li>1. Չանագանելու բարդ նախադասության տեսակներն ու նրանց առանձնահատկությունները, պարզաբանելու բարդ համադասական և ստորադասական նախադասությունների դասակարգման հիմունքները, բացահայտելու բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների տեսակները:</li> <li>2. Գործառելու բարդ նախադասությունը ԴԴ-ով պարզ նախադասության և պարզ բարդ ստորադասական նախադասության փոխարկելու քերականական առանձնահատկությունները:</li> <li>3. Ձևակերպելու մեջբերվող խոսքը, նրա կետադրությունը և այն անուղղակի խոսքի փոխակերպելու գործառույթը,</li> </ol> <b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b> <ol style="list-style-type: none"> <li>1. Վերլուծելու բազմատեսակ պարզ և բարդ նախադասություններ:</li> <li>2. Հետազոտելու և համեմատելու նախադասության կառուցվածքային տեսակները:</li> <li>3. Տարանջատելու նախադասությունների առաջադրված գծապատկերները:</li> </ol> <b>գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ</b> <ol style="list-style-type: none"> <li>1. Կատարելու լեզվաբանական հետազոտություններ և վերլուծություններ:</li> <li>2. Հաստատելու միջառարկայական կապեր:</li> <li>3. Մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:</li> </ol>		
<b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրյունք(ներ)ը</b> Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի. <b>Ա1.</b> Բացահայտելու լեզվաբանական բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները: <b>Ա3.</b> Լեզվաոճական, բարբառագիտական և գրականագիտական ուսումնասիրությունների համար բնագրային նյութեր օգտագործելու կարողություն: <b>Ա4.</b> Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու		

<p>խնդիրներին համահունչ:</p> <p><b>Ա5.</b> Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած ուսումնասիրության արդյունքները:</p> <p><b>Բ1.</b> Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:</p> <p><b>Բ2.</b> Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, համակարգելու և ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:</p> <p><b>Բ3.</b> Գործառնելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ լեզվաբանական ուսումնասիրություններ ներկայացնելիս տեսական, թե գործնական:</p> <p><b>Բ4.</b> Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի և գրականության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր:</p> <p><b>Բ6.</b> Օգտագործելու բնագրային նյութերը լեզվառճական, բարբառագիտական և գրականագիտական ուսումնասիրություններում:</p> <p><b>Գ1.</b> Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական-հետազոտական գործունեությունն ծավալելիս, տարբեր աղբյուրներից հայթայթելու մասնագիտական արդիական տեղեկատվություն և կիրառելու դրանք հետազոտությունների արդյունքներում:</p> <p><b>Գ3.</b> Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:</p> <p><b>Գ6.</b> Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. դասախոսություն</li> <li>2. բացատրական մեթոդ</li> <li>3. համագործակցային աշխատանք</li> <li>4. տեսադրվագաշարերի գործածություն թեմաների ուսուցման ընթացքում</li> <li>5. մտազրոհ</li> <li>6. ռեֆերատներ:</li> <li>7. ինքնուրույն հետազոտական աշխատանքներ</li> <li>8. մասնագիտական թեմատիկ զեկուցումներ</li> </ol>
